# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«04» սեպտեմբերի 2015 թվական N 121–Ա**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՌԵԼԱՓԱՅՏԻ ԳՆՄԱՆ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, << Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» N 168-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 25-րդ կետի 6-րդ ենթակետի «գ» պարբերությամբ՝ **համայնքի ավագանին որոշում է.**

**1.** Սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվող վառելափայտի գնման համար հատկացնել 11 750 000 (տասնմեկ միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

**2.** Թույլատրել անհրաժեշտ գնումները իրականացնել բանակցային ընթացակարգի կիրառմամբ՝առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու:

**3.**Գնումների իրականացման և վառելափայտի բաշխման ողջ գործընթացի վերահսկողությունը վերապահել Գյումրի համայնքի ավագանու սոցիալական, առողջապահության և բնության պահպանության հարցերի մշտական հանձնաժողովին:

**4.** Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4212) <<Էներգետիկ ծառայություններ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

**Կողմ (14)** **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ա. Ադամյան ________

Գ.Ադամյան ________

Ա.Բադեյան ________

Ա. Բաղրամյան ________

Մ. Գաբոյան ________

Ա.Գրիգորյան ________

Վ. Եդիգարյան

Հ. Խաչատրյան

Տ.Հովհաննիսյան

Վ. Հունանյան

Ռ. Մխիթարյան

Վ. Շիրինյան

Մ. Սահակյան

Տ. Փանոսյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

**ք.Գյումրի**
**«04» սեպտեմբերի 2015 թ.**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

**«04» սեպտեմբերի 2015 թվական N 122-Ա**

## ԳՅՈՒՄՐՈՒ ««ԿՈՄՊԱՍ» ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ,ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով Գյումրու «Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն» հասարակական կազմակերպության գրությունը (քաղաքապետարանում մուտքագրված 2015 թվականի օգոստոսի 18-ին N 10198 թվագրմամբ )՝ **համայնքի ավագանին որոշում է**.

1. Գյումրի քաղաքում սոցիալ-տնտեսական հետազոտությունների իրականացմանն ու ձեռներեցության զարգացմանն աջակցելու նպատակով Գյումրու ««Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն» հասարակական կազմակերպությանը, որպես նվիրատվություն, հատկացնել 998.000 (ինը հարյուր իննսունութ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման(4819) <<Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

**Կողմ (14)** **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ա. Ադամյան ____________

Գ.Ադամյան ____________

Ա.Բադեյան ____________

Ա. Բաղրամյան ____________

Մ. Գաբոյան ____________

Ա.Գրիգորյան ____________

Վ. Եդիգարյան ____________

Հ. Խաչատրյան

Տ.Հովհաննիսյան

Վ. Հունանյան

Ռ. Մխիթարյան

Վ. Շիրինյան

Մ. Սաhակյան

Տ. Փանոսյան

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

**ք.Գյումրի**
**«04» սեպտեմբերի 2015 թ.**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

**«04» սեպտեմբերի 2015 թվական N 123-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ <<ԵՐԿՐԱՊԱՀ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ>> ԳՅՈՒՄՐՈՒ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻՆ ՈՐՊԵՍ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ԴԻԶԵԼԱՅԻՆ ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, հիմք ընդունելով <<Երկրապահ կամավորականների միություն>> Գյումրու տարածքային բաժանմունքի նախագահ Վարդան Սարգսյանի գրությունը (քաղաքապետարանում մուտքագրված 2015թվականի օգոստոսի 11-ին N 9907 թվագրմամբ)՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության <<Երկրապահ կամավորականների միություն>> Գյումրու տարածքային բաժանմունքին որպես օգնություն հատկացնել 210.000 (երկու հարյուր տաս հազար) Հայաստանի Հանրապետության դրամ և 220 (երկու հարյուր քսան) լիտր դիզելային վառելանյութ՝ Լեռնային Ղարաբաղում 2015թվականի օգոստոսի 15-ից անցկացվող ամենամյա ուխտագնացությանը գյումրեցի թվով 50(հիսուն) ազատամարտիկներից և պատանի երկրապահներից բաղկացած խմբի ճանապարհածախսը հոգալու նպատակով:

2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015թվականի բյուջեի 10/4/1 գործառական դասակարգման (4729) <<Այլ նպաստներ բյուջեից>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից, իսկ դիզելային վառելանյութի ձեռքբերման գումարի հատկացումը՝ 2/5/1 գործառական դասակարգման (4264) <<Տրանսպորտային նյութեր>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

**Կողմ (14)** **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ա. Ադամյան ____________

Գ.Ադամյան ____________

Ա.Բադեյան ____________

Ա. Բաղրամյան ____________

Մ. Գաբոյան ____________

Ա.Գրիգորյան ____________

Վ. Եդիգարյան ____________________

Հ. Խաչատրյան ____________________

Տ.Հովհաննիսյան ____________________

Վ. Հունանյան ____________________

Ռ. Մխիթարյան ____________________

Վ. Շիրինյան ____________________

Մ. Սահակյան ____________________

Տ. Փանոսյան ____________________

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

**ք.Գյումրի**
**«04» սեպտեմբերի 2015 թ.**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

**«04» սեպտեմբերի 2015 թվական N 124–Ա**

**«ԱՌS» ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ,ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով «ԱՌS» երիտասարդական, բնապահպանական և խորհրդատվական հասարակական կազմակերպության գրությունը (քաղաքապետարանում մուտքագրված 2015 թվականի հուլիսի 16-ին N 8645 թվագրմամբ)՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. 2015 թվականի սեպտեմբեր ամսին Ստեփանավանում «ԱՌS» երիտասարդական, բնապահպանական և խորհրդատվական հասարակական կազմակերպության Վորլդ Վիժն Գյումրիի «Տարածքային զարգացման ծրագրի» աջակցությամբ իրականացվելիք երիտասարդական վրանային 5-օրյա ճամբարի կազմակերպման և ծրագրի իրականացման նպատակով, որպես նվիրատվություն հատկացնել 500.000 (հինգ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման (4819) <<Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

**Կողմ (14)** **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ա. Ադամյան ____________

Գ.Ադամյան ____________

Ա.Բադեյան ____________

Ա. Բաղրամյան ____________

Մ. Գաբոյան ____________

Ա.Գրիգորյան ____________

Վ. Եդիգարյան ____________________

Հ. Խաչատրյան ____________________

Տ.Հովհաննիսյան ____________________

Վ. Հունանյան ____________________

Ռ. Մխիթարյան ____________________

Վ. Շիրինյան ____________________

Մ. Սահակյան ____________________

Տ. Փանոսյան ____________________

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

**ք.Գյումրի**
**«04» սեպտեմբերի 2015 թ.**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


# ՈՐՈՇՈՒՄ

**«04» սեպտեմբերի 2015 թվական N 125–Ա**

## ԳՅՈՒՄՐՈՒ «ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպության գրությունը (քաղաքապետարանում մուտքագրված 2015 թվականի օգոստոսի 08-ին N 9675 թվագրմամբ )՝ **համայնքի ավագանին որոշում է**.

1. Գյումրիում երիտասարդության միջազգային օրվան նվիրված միջոցառումների անցկացման նպատակով Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպությանը, որպես նվիրատվություն, հատկացնել 250.000 (երկու հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման (4819) <<Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

**Կողմ (14)** **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ա. Ադամյան ______

Գ.Ադամյան ______

Ա.Բադեյան ______

Ա. Բաղրամյան ______

Մ. Գաբոյան ______

Ա.Գրիգորյան ______

Վ. Եդիգարյան ______

Հ. Խաչատրյան ______

Տ.Հովհաննիսյան ____________

Վ. Հունանյան ____________

Ռ. Մխիթարյան ____________

Վ. Շիրինյան ____________

Մ. Սահակյան ____________

Տ. Փանոսյան ____________

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

**ք.Գյումրի**
**«04» սեպտեմբերի 2015 թ.**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«<u>04</u>» <u>սեպտեմբերի</u> 2015 թվական N <u>126–Ա</u>**

## <<ՀԱՐՅՈՒՐ ՏԱՐԻ ԵՎ ԿԵՍ ԴԱՐ>>ԳՐՔԻ ՏՊԱԳՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ, ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով <<Հարյուր տարի և կես դար>> գրքի տպագրման և հանրությանը որպես գրական ժառանգություն ներկայացնելու կարևորությունը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման>> մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի թատերական գործիչների միության գրությունը (քաղաքապետարանում մուտքագրված 2015 թվականի օգոստոսի 24-ին N 10375 թվագրմամբ )՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. <<Հարյուր տարի և կես դար>> գրքի տպագրման նպատակով Հայաստանի թատերական գործիչների միությանը, որպես նվիրատվություն, հատկացնել 450 000 (չորս հարյուր հիսուն հազար ) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման(4819) <<Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

**Կողմ (14)** **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ա. Ադամյան ____________

Գ.Ադամյան ____________

Ա.Բադեյան ____________

Ա. Բաղրամյան ____________

Մ. Գաբոյան ____________

Ա.Գրիգորյան ____________

Վ. Եդիգարյան

Հ. Խաչատրյան

Տ.Հովհաննիսյան

Վ. Հունանյան

Ռ. Մխիթարյան

Վ. Շիրինյան

Մ. Սահակյան

Տ. Փանոսյան

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

**ք.Գյումրի**
**«04» սեպտեմբերի 2015 թ.**

9) քաղաքացիների սեփականության հողեր 407,56 (չորս հարյուր յոթ ամբողջ հիսունվեց հարյուրերրորդական) հեկտար,
10) իրավաբանական անձանց հողեր 68,81 (վաթսունութ ամբողջ ութսունմեկ հարյուրերրորդական) հեկտար,
11) համայնքային սեփականության հողեր 3255,45 (երեք հազար երկու հարյուր հիսունհինգ ամբողջ քառասունհինգ հարյուրերրորդական) հեկտար,
12) պետական սեփականության հողեր 687,52 (վեց հարյուր ութսունյոթ ամբողջ հիսուներկու հարյուրերրորդական ) հեկտար,
13) վարչատարածք՝ 4429,50 (չորս հազար չորս հարյուր քսանինն ամբողջ հինգ տասնորդական) հեկտար:

**Կողմ (14)** **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ա. Ադամյան ____________

Գ.Ադամյան ____________

Ա.Բադեյան ____________

Ա. Բաղրամյան ____________

Մ. Գաբոյան ____________

Ա.Գրիգորյան ____________

Վ. Եդիգարյան ____________

Հ. Խաչատրյան ____________

Տ.Հովհաննիսյան ____________

Վ. Հունանյան ____________

Ռ. Մխիթարյան ____________

Վ. Շիրինյան ____________

Մ. Սահակյան ____________

Տ. Փանոսյան ____________

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

**ք.Գյումրի**
**«04» սեպտեմբերի 2015 թ.**